

Եւ ես քանզի զահարով էի՝ ծախեցի դտունս ու տեղս եւ զամենայն ինչ. եւ առեալ զկինս եկի Լէվ, թվին Ռ-29 (1624), Օգոստոս ԺԵ. : Եւ Վարդայ Սաչին<sup>2</sup> թէսլիմ արին գիւրատունն եւ զտղայս : Եւ տվին ինձ քարէ տուն ի Շրի-թալն՝ կենալ առանց վարձու. որոց Տէր Աստուած վարձահատոյց լիցի եւ որք շինեցին զայն տներն, որ մեք հանկաք եւ դուրացաք. պարոն Տօնաւազն հանգչի արքայութիւնն, զի նորա է վախրՖ : Այլ եւ երախտաւորաց եւ բարերարաց մերոց Տէր Աստուած ողորմեացի. եւ նմա փա՛ռք յաւիտեանս. ամէն :

Հրատարակեց Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ



**ՓԻՐԳՈՒՍԻ ԵՒ Մ. ԽՈՐԵՆՈՑԻՆ**

(Շարունակութիւն եւ վերջ):

Գ.

Երեւանում հրատարակուած «Ֆիրզուսի» ժողովածուի զլիսաւոր մասն է Կ. Մելիք Օհան Զանեանի հմտալից ուսումնասիրութիւնը՝ «Ֆիրզուսին եւ Իրանի վիպական մտորվները՝ Շահ-Նամէ, ու հայ մատենագրութեան մէջ» խորագրով : Շատ բան նոր է այնտեղ իբր հայեցակէտ : Հեղինակն ճշմունք է ապացուցանել ի մէջ այլոց թէ «մեր մատենագիրներից Ազաթանդեղոսի եւ Բուզանդի «պատմութիւնների» մէջ պատմական ճանաչուած իրադարձութիւնների մի քանիսը վիպական եւ առասպելական են» (էջ 78—79) : Հեղինակն առ այժմ բաւականացել է ակնարկներ անելով այդ մասին : Ինչպէս յայտնում է նա՝ ընդարձակ գրութիւն ունի այս նիւթի վրայ, որտեղ պարզել եւ հիմնաւորել է իր մտքերն եւ որը գեռ մնում է ձեռագիր, ինչպէս է օր. 4. «Լուսաւորչի վէպը» : Որքա՞ն ճիշդ է այս կանխակալ եզրակացութիւնն, առ այժմ դժուար է ասել : Պ. Օհանջանեան դտնում է, որ հայ կղերն էլ այնքան ողբերգուել է Շահնամէով, որ պահանջ է զգացել «մեծ տաղաչափութեամբ Շահնամէի չափով, բանաստեղծական քերթուածներ ունենալու» եւ դրա արդիւնքն է «ակնաւոր բանաստեղծ» Կոստանդին Երզնկացու մեծ քերթուածը՝ «Բանք յա-

զագս անցաւոր մեծութեան», որ ձեւով իրանեան-Ֆիրզուսեան է, իսկ բովանդակութեամբ քրիստոնէական-հայկական : Միայն թէ հեղինակն ինքն էլ ընդունում է թէ այդ երկու գրութեան ուղղութեան մէջ զգալի տարբերութիւն կայ, ուստի աւելացնում է՝ «Ֆիրզուսին՝ կեանքի ու վայելքի հարմոնիան է հնչեցնում, Կոստանդին Երզնկացին՝ ընդհակառակն, կեանքի ու վայելքի մերժման տխուր մեղեդին» (էջ 113—114) :

Հեղինակն օգտագործել է շատ ազբիւրներ, թէ՛ իրանական թէ՛ հայկական եւ թէ՛ եւրոպական, եւ այս պատճառով էլ իր ուսումնասիրութիւնը շատ ճիւղաւորուել է, որ չէ վնասում բնաւ՝ գրութեան նպատակին : Ես թոյլ եմ տալիս ինձ նրա ուշադրութիւնը հրաւիրելու նրան անձանօթ մի նոր ազբիւրի վրայ, որ գտնուում է իր ձեռքի տակ, Հայաստանում, եթէ միայն որ եւ է սխալում չկայ այն տեղեկութեան մէջ, որից ես օգտուում եմ :

Jules Mohl իր համբաւաւոր երկասիրութեան 2. հատորում բառացի ասում է. «Il paraît, qu'on conserve dans la bibliothèque d'Etchmiadsin, deux traités en arménien, sous le titre de la Sagesse de Nouchirvan, et il est vraisemblable qu'ils contiennent des traductions de livres pehlevi, tels que Firdousi en avait sous les yeux (T. VI, Préface V). Եթէ իրօք էջմիածնում» նուշիրվանի իմաստութիւնը՝ վերնագրով այդպիսի հայերէն երկու ձեռագիր կայ, որ, ինչպէս Mohl ենթադրում է, թարգմանուած պէտք է լինին այն պակասակալ գրքերից, որոնք Ֆիրզուսի իր աչքի առջեւ է ունեցել, նոր հորիզոն է բացուում «Ֆիրզուսին եւ հայ մատենագրութիւնը» ուսումնասիրողների համար... Երեւանում կամ էջմիածնում\* :

Ժողովածուի երկրորդ յօդուածն է Պրոֆ. Մանուկ Աբեղեանի լաւ մշակուած ուսումնասիրութիւնը՝ «Շահնամայի» ոտանաւորի չափը հայ բանաստեղծութեան մէջ :

Գ. Լեւոնեան մանրամասնօրէն յիշատակում է՝ «Բիրլիոգրաֆիական տեղեկանք» փոքր ինչ տարօրինակ վերնագրի տակ թէ ե՛րբ, ո՛րտեղ եւ ի՛նչ մասերը թարգմանուել է հայերէն՝ Ֆիրզուսու հրաչակերտը :

Այս «տեղեկանքից» երեւում է, որ հայե-

\* Տե՛ս այս մասին Հ. Ն. Ակիբեանի յօդուածն՝ «Նրաւտ Լեւոնջըրուան (Նուշիրվան քաղաւորին)», վերջ էջ 97 եւ յջ. :

<sup>2</sup> Սեպտեմբեր 26 :

րէն մասնակի թարգմանութիւններ հետեւեալներն են .

1. Մամուէլ Գիւլղաղեանցի՝ «Ռոստոմ եւ Սոհրաբ», 1893 թ. :

2. Նոյն թարգմանչի՝ «Զոհակ Բիւրասպի Աժդահակ», 1894 :

3. Նոյն թարգմանչի՝ «Սիւլուշ, Գէյ Խոսրովից հատուածներ», 1895 :

4. Յ. Թիրեաքեանի՝ «Շահնամակ Ֆիրզուսի, դրուագ Արտաշիր Բարականի», Նիւ Եօրկ 1909 :

5. Գէորգ Ասատուրի՝ «Բեթան եւ Մանիքա վէպի նախերգանքը», Երեւան 1924 :

6. Սեյադի (Պետրոս Մատաթեանց)՝ «Երզնկաբանութիւն»՝ Սուլթան Մահմուդին ուղղուած, 1884 :

7. Սողոմոն Տարօնցու, նոյն գրութեան տարբեր վերնագրով՝ «Ծագր Սուլթան Մահմուտի մասին», «Սորհ. Հայաստան», 1934, թ. 141 :

8. Նոյնի՝ «Ռոստամի եւ Զոհրաբի վերջին մենամարտը», «Գրական թերթ», 1934, թ. 20 :

Այս Յուլցակի մէջ չէ մտել նորիս (1934ին) թէ՛հրանում հրատարակուած՝ Յ. Զ. Միրզայեանցի թարգմանութիւնը՝ «Շահնամէ՝ Կորոններ — 1. Ռոստոմ եւ Սոհրաբ, 2. Ռոստոմ եւ Աշքարուս, 3. Ռոստոմ եւ Էսֆանդեար» :

Այնուհետեւ յիշուած են Ֆիրզուսու մասին՝ այլեւայլ ամսագիրներում երեւցած քննական յօդուածները ընդ ամէնը 6 յօդուած 1858ից մինչեւ 1906 : Այս մասում բաց է թողուած մի կարեւոր ուսումնասիրութիւն, անչուշտ այն պատճառով, որ հեղինակը թէեւ հանրածանօթ հայ հրատպագիր (խմբագիր «Հիւսիսափայլի») եւ մեծ իրանագէտ, իր աշխատութիւնը գրել է ռուսերէն եւ ոչ հայերէն ինչպէս միւսները : Այս հայ գիտնականն է Ստեփանոս Նազարեանց, որ առաջինն է եղած, Հայոց մէջ, Ֆիրզուսու վրայ լուրջ ուսումնասիրութիւն գրողը : Նրա այս երկի վերնագիրն է՝ Абуль-Касемъ Фердауси Тусскій, Творецъ Книги царей, славной подъ названіемъ Шахъ-Намэ (Աբուլ Կասըմ Ֆէրզաուսի, Թուսցի, «Արքայից Գրքի» ստեղծողն, որ յայտնի է Շահնամէ անուամբ) : Նազարեանց իր այս քննութեանը կցել է՝ պարսկական բանաստեղծութեան պատմութիւնը մինչեւ ԺԵ. դարի վերջը : Այս ուսումնասիր-

ութիւնը երկու մասից է բաղկացած : Ա. մասը տպուած է 1859ին Կազանի համալսարանի պարբերաթերթում (Ученыя Записки Казанскаго Университета) իսկ Բ. մասը՝ 1861ին Մոսկուայում : Նազարեանց, ինչպէս երեւում է, մեծապէս հետաքրքրուել է J. Mohlի հրատարակութեամբն եւ երբ իր աշխատութեան այս Բ. մասը լոյս է ընծայել, նրանից մի օրինակ ուղարկել է Պարիս գաղղիացի համբաւաւոր իրանագէտին : Mohl ինքն է յիշում այս մասին, իր հրատարակութեան 2. հատորի յառաջաբանում :

Ստ. Նազարեանց, որ «Արեւելագիտութեան Դոկտորի» ուսումնական աստիճանն ունէր, դրանից յառաջ թարգմանել էր արդէն պարսկերէն բնագրից միւս պարսիկ մեծ բանաստեղծ Սաադիի (Շէխ Մուալիհ-է-Գըրին) հանրածանօթ «Գիւլիստանը» : Այստեղ եւս նա ունի գրական պատմական ներածութիւն<sup>1</sup> : Տպուած է Մոսկուայում 1857ին :

«Ս. Հայաստանի Պետական Կուլտ-Պատմական թանգարանը, գրում է նոյն ժողովածուի մէջ Աս. Շահնագարեան, ներկայումս ունի յերկու «Շահնամէ»ի ձեռագիր նկարագրող պարսկերէն օրինակներ, որոնցից ամենից աւելի աչքի է ընկնում Թ. 20ը, որն ստացուել է Լազարեան ձեռնարանից» եւ նա նկարագրում է այս վերջինն հետեւեալ տողերում (էջ 147—148) .

«Այդ ձեռագիրը թէեւ արտագրուել է XIX դարի առաջին կիսում, հետեւաբար վերջին ժամանակի գործ է, բայց ձեռագրի թէ ներքին եւ թէ արտաքին հանգամանքերից, ինչպէս նաեւ մանրանկարչութեան տեսակէտից երեւում է, որ դա ընդօրինակուած է XVI—XVII դարերի լաւագոյն մի օրինակից : Շահնամէի այս ձեռագրի մեծութիւնն է 35 × 23 × 5 ս(անտիմետր), բաղկացած է 389 թերթից, (777 էջ) . . . : Ամբողջ ձեռագիրն այնպիսի խնամքով եւ մեծ զգուշութեամբ է գրուած, որ չկայ աւելացրած կամ ուղղած մի բառ անգամ . . . : Գրութիւնը մանրատառ նասխի է սեւագոյն մեղանով, պարզ եւ անչլոթ

<sup>1</sup> Լազարեան ձեռարանն իր հիմնարկութեան յիշամեակի առթիւ ուսուէրէն լեզուով մեծ ժողովածու է հրատարակած 1865ին, որի մէջ կայ ձեռարանի հաշուետուութիւնն եւ այս յօդուածի առթիւ խօսուած ճառերի բովանդակութիւնը : Այս ժողովածուի մէջ յիշատակուած է նմանապէս Ստեփանոս Նազարեանցի այս եւ ուրիշ գրական գործերի ցուցակը (էջ 59—60) : Այս ժողովածուն շահեկան է նաեւ այն կողմից, որ Տեղեկութիւնը յարմար է գտել կցել այնտեղ, հայութեան համար պատուարեր վաւերագրերին, կայսերական հրովարտակների ամբողջական պատճէներ :

առաջինը, առանց աւելորդ գծերի, վերնա-  
զրերը՝ բաց կարմրագոյն մեղանով եւ այլն» :  
Թուականն է հիշքէի 1245, ուրեմն մեր 1828  
տարին :

«Այս ձեռագրի ամենահետաքրքիր եւ ու-  
շագրութեան արժանի կողմն է կազմում նրա  
մանրանկարչութիւնը որով զարդարուած են  
գրքի 52 էջերը. նկարչի համար իբրեւ նիւթ  
են ծառայել Ծահնամէի մէջ գեղարուեստական  
պատկերացումով հանդէս բերուած դիւցա-  
զունները, առասպելական շրջանի թագաւոր-  
ները, զօրավարներն ու հերոսները, նրանց  
կուռի, որսի, հանդէսների, խրախմանքի, սի-  
րահարութեան եւ պալատական կեանքի այլեւ-  
այլ տեսարանները, ինչպէս նաեւ այդ բոլորին  
կից Իրանի կապտագոյն կամ արեւոտ եր-  
կինքը, զօրը եւ լերկ լեռներն ու բլուրները,  
կանաչ մարգագետինները, ջրառատ աւազան-  
ները եւ սաղարթախիտ նոճիկները...» 2 :

2 Ես հաճութեամբ կարդացի այս նկարչու-  
թիւնն, որովհետեւ Ծահնամէի այս հետաքրքրական  
զրչագիրն ես տեսիլ եւ աչքից անցրել եմ Մոսկուայում,  
նախ քան Հայաստան փոխադրուելը, այնպիսի բացառիկ  
պարզանքի մէջ, որ աւելորդ չեմ համարում այս-  
տեղ պատմելը :

Ռուսական Համայնավարական Ֆեդերատիւթիւնի  
յետոյ, Լազարեան ձեռարանը կարճ ժամանակով ան-  
ցել էր բուրժուական օրակարգի մեծ փոփոխու-  
ման փուլի մէջ, որ հիմնարկութիւնը կրում էր «Արեւելիան  
Լազարեան ձեռարան (Лазаревский Институтъ Восто-  
чныхъ Языковъ) պաշտօնական կոչումն եւ որովհետեւ  
Ռուսաստանում այսպիսի լեզուով խօսող 20 միլիոն  
թուրք-թաթարներ կային, ընդ ամենը 2 միլիոն հայի  
փոխարէն, ուստի սկսեց է որ ձեռարանը մեծամաս-  
նութեան, այն է թաթարների լեզուի ուսման ծառայէր  
եւ նրանց կարգադրութեան տակ գրուէր : Եւ Մոսկուայի  
«Ազգութիւնների Գործավարութիւնը» (Коммунариат  
по национальности) ընդունել էր այս տարրինակ  
պատճառարանութիւնը : Երբ քիչ վերջը, Հայաստանի  
պատճառարանութիւնը վարչապետը, Սահակ Միրզ : Տէր  
Գարրիբեկեան Մոսկուա եկաւ իբրեւ Հայաստանի լիազօր  
ներկայացուցիչը կենդանական կառավարութեան մօտ  
եւ ընդհանուր Ռուսաստանի բարձրագոյն վարչական  
մարմին ВЦКР (Всероссийский Центральный Коми-  
тет = Համաստեակական Կենդրոնական Կոմիտէ) ան-  
գամ, նա իսկոյն լծուեց այս անընթաց փոփոխու-  
մանը եւ յաջողեցաւ : 1922 Յունուարին էր, որ ձե-  
մարանի վերստին Հայոց յանձնումն իրականացաւ : Այն  
ժամանակ եւս պատեցայ դասարանները, տեսնելու հա-  
մար թէ ինչ փոփոխութիւն մէջ էին գտնուում : Դասարաննե-  
րից մէկում ես տեսայ մի ֆէսուար մարդու (եւ մեծ կեն-  
դանագիրը, պատից կախուած : Ես մօտեցայ, որ կար-  
գամ նրա վրայի արարեթէն տառերով մակագրութիւնը  
եւ երբ կարդացի, մնացի սպառճ... : Տիրահոստակ  
սուրբան Արդիւլ Համիդի պատկերն էր : Հայի ձեռքով  
հիմնուած, հայի գրամով պահպանուած եւ մեծամաս-  
նութեամբ հայ ուսանողների ուսած բարձրագոյն դպրո-  
ցում հայի դասի սուրբանի գոյութիւնը գէմքն էր փայ-  
լում... : Յանձնումից անմիջապէս վերջը, Տէր Գա-  
րրիբեկեանի ատենապետութեան տակ ժողով կայացաւ,  
որին եւս մասնակցեցի, հարկ եղած կարգադրութիւն-  
ներն անելու համար, որ Լազարեան ձեռարանը մա-  
րդուի եւ ծառայէ իր նպատակին՝ այն է, հայ ժողովրդի  
կրթութեանն եւ զարգացման : ձեռարանի Մատենադա-  
րանի թանկագին ձեռագիրներն եւ այլ իրերը, բարե-

Այս գրչագիրը Ծահնամէից են վերցուած՝  
ժողովածուի մէջ առատօրէն գրուած մանրա-  
նկարները :

ՅԱԽԵԼՈՒԱԾ

Ֆիրդուսիի ծննդեան հազարամեակը հա-  
մաշխարհային տօնի բնաւորութիւն ունեցաւ :  
Եւրոպական մայրաքաղաքներն, աւելի կամ  
պակաս հանդիսաւորութեամբ, բայց բոլորն  
էլ տօնեցին Արեւելքի այդ մեծ քերթողի յի-  
շատակը : Ծահնամէի մէջ պարզուած շատ ա-  
ւանդութիւններ եւ զրոյցներ կան, որոնք ա-  
ղերս կամ գոնէ նմանութիւն ունին Միջնա-  
դարեան Եւրոպայի ծանօթ գիւցազներգու-  
թիւնների եւ աւանդական վէպերի հետ : Այս  
է պատճառը մասամբ, որ Արեւմտեան աշ-  
խարհի արեւելագէտներն այդպիսի մեծ յար-  
գանք մատուցին Արեւելքի մեծ դաւակին :

Առանձնապէս հանդիսաւոր էր Պարիսի  
յարգանքը : Գաղղիան՝ արեւելագիտութեան  
ճիւղի մէջ ոչ մի եւրոպական երկրից ես չեմ  
մնացած : Մանաւանդ թէ ունեցած է գիտնա-  
կաններ, որոնք յատկապէս Իրանագիտութեան  
Կարապետներ են հանդիսացել, այսպէս են՝  
Anquetil-Duperon, Jules Mohl եւ Eugène  
Burnauf :

Պարիսում 1934 Նոյեմբեր—Դեկտեմբերին

բախտարար պահել էին մի մեծ երկաթեայ սնտուկի  
մէջ, որ եւ է փորձանից պղտակու համար : Յատուկ  
Յանձնաժողով ընտրուեց այդ սնտուկը բանալու եւ մէջի  
իրերը ցուցակագրելու համար, որի անդամներն էինք,  
ձեռարանի նորընտիր վարիչ Կարէն Միքայէլեան,  
Պրոֆ. Ներսիսեան եւ ես : Սնտուկի բանալին չգտնուեց,  
որով հարկ եղաւ մեքենայորդ կանչել : Մեքենայորդն  
որ մեր ժողովրդական երգիչ Աչուղը Քիլանու որդին  
էր, կտրեց փականքն եւ սնտուկը բացաւ : Սկսանք հա-  
նել հազարավոր գրչագիրներ, որոնց մէջ էր հայերէն  
ծանօթ ամենահին ձեռագիր գրուածքը, Թ. զարի Աւե-  
տարանը : Կարէն Միքայէլեան հանց, սուսա ինձ  
պարսկական ճաշակով կազմուած, եւ ընտիր պարսկա-  
կան մանրանկարներով զարդարուած արաբատա մի  
գրչագիր, որ քննեմ : Ես մի քանի բոյէ աչքի անցրի  
թերթեցի եւ յայտնեցի, որ աշխարհահռչակ Ծահնա-  
մէն էր, ճիշդ այն, որ վերեւ այդպէս ճշգրտէն նկարա-  
գրել է Ծահնագրեան : Այս է, որ յետոյ ուրիշ գեղա-  
րուեստական իրերի հետ Մոսկուայից ուղարկուեց  
Երևան :

Ներուի ինձ այս առթիւ յիշել նաեւ հետեւեալը :  
Դրանից մի քանի օր վերջը ես գարձայ Լէնինգրադ, ուր  
բնակուած էի : Այնտեղ հանդիպեցայ Երևանում նոր բա-  
ցուած հայկական Համալսարանի տեսուչ Գ. Զաւթեան-  
ին, որ եկել էր գրքեր, մանաւանդ թէ ամբողջ գրա-  
դարաններ գտնելու Հայաստանի համար, որ այդ առա-  
ջին տարիները շատ կարեւոր բաների էր կարօտ... :  
Ես հաճութեամբ յանձնեցի նրան իմ անմահական մատե-  
նադարան (որչափ կարողացել էի փրկել...) , որ իմ  
միակ գոյքս էր մնացել, իրը դրոյն նուէր իմ կողմից  
մեր նորակազմ Մայր Հայրենիքին : Պ. Զաւթեան իմ  
գրքերը սնտուկների մէջ դնել տալով, միացրեց մեր  
Պետերբուրգի հայկական սպիւմբի մատենադարանին,  
Երևան ուղարկելու համար :

տեղի ունեցան այդ հանդէսները, հանրապե-  
տութեան նախագահի ներկայութեամբ : Ամէ-  
նից կարեւորն էր այն, ինչ որ գաղղիական  
համբաւաւոր «Ազգային Մատենադարանն»  
(Bibliothèque Nationale) էր կազմակերպել,  
մի վերին աստիճանի շահեկան ցուցահանդէս,  
որին իրենց մասնակցութիւնն էին բերել բո-  
լոր պետական պաշտօնարաններն, որչափ որ  
առնչութիւն ունէին ցուցահանդէսի ծրագրին :  
Յուցահանդէսի նպատակն էր՝ նախ ցոյց տալ  
Իրանի մեծ բանաստեղծի գրական գլուխ գոր-  
ծոցն, եւ ապա կամ միեւնոյն ժամանակ պատ-  
կերացնել այն ուղին, որով ընթացել է Իրա-  
նական Ուսումն Եւրոպայում, սկզբից մինչեւ  
մեր օրերը : Առաջին նպատակի գլխաւոր ա-  
ւարկան բնականաբար «Արքայազիրքն» կամ  
Ծահնամէն էր, որից երկու գրչագիր է տես  
էր գրուած : Մէկը օրինակուած էր 1430ին եւ  
ունէր սքանչելի գեղանկարներ Թիմուրեան  
առաջին շրջանին յատուկ : Բացուած էր այն  
էջն, ուր Կայ-Լոհրասայ բազմել էր գահի  
վրայ : Սա՛ հայրն էր Գոշտասպի (Վշտասպ),  
որ ըստ աւանդութեան առաջինն է եղած  
Զրադաշտին հաւատացողն եւ նրա ջերմ պաշտ-  
պանն, որի շնորհիւ էլ զրադաշտականութիւնը  
հիմն է դրել Իրանական աշխարհում : Կայ-  
(կամ Բէյ-Լո) Սոսրով այս Լոհրասային նշանա-  
կել է իրեն յաջորդ եւ ինչպէս Ֆիրդուսին է  
պատմում, այնուհետեւ քաջուել է անապատ,  
մի աղբիւր է գտել այնտեղ եւ խորհրդաւոր  
կերպով աներեւութացել :

Ծահնամէի երկրորդ գրչագիրը, նոյնպէս  
սքանչելի զարդանկարներով, բացուած էր այն  
էջի վրայ, ուր գահի վրայ էր Ծահ-Թահմասպ  
արքան (1524—1576), իր արքունիքով շրջա-  
պատուած : Սրա ժամանակ էր, որ Անդլիայի  
Նիկիտայի թագուհին փորձել է յարաբերու-  
թիւններ հաստատել Սէֆէվիների արքունիքի  
հետ :

Ծահնամէի եւրոպական լեզուներով կա-  
տարուած գրեթէ բոլոր թարգմանութիւնները  
կային այնտեղ եւ շրջապատել էին բնագիր-  
ները : Առաջին տեղն էր գրուում Jules Mohlի  
հրատարակութիւնն, որ մի կատարեալ կոթող  
է հանդիսանում Ֆիրդուսիի պատուին կանգ-  
նուած :

Միւս թարգմանութիւններն էին՝

Գերմաներէն՝ Görresի, մասնակի, 1820ի,  
Von Schackի մասնակի՝ 1851—1869, տպ :

Բերլին եւ F. Ruckertի ամբողջ՝ 1890—  
1895, տպ : Բերլին :

Անգլիերէն՝ Atkinsonի մասնակի 1832  
Լոնդոն, եւ Warnerի ամբողջ՝ 1906—1912,  
Լոնդոն :

Իտալերէն՝ Pizziiի մասնակի՝ Տուրինո,  
1886—1888. եւ

Գաներէն (danois)՝ Christensenի :

Ամէնից աւելի հետաքրքրութիւնն շար-  
ժեցին Թուրքերէն թարգմանութիւնները, եր-  
կուսն էլ գրչագիր, մէկը ոտանաւոր, 1520ին  
գրուած, պարսկական նէսիի գրով եւ կա-  
պոյտ ու սուկեդոյն շրջանակներով, Շիրազի  
սոփ : Միւսը՝ արձակ, աւելի ուշ թարգմա-  
նուած եւ արտագրուած Սուլթան Օսմանի  
հրամանով ժէ. դարում : Թարգմանիչն է ոմն  
Դէրվիշ Հասան՝ Մահալի կոչուած : Այս գրչա-  
գրի պատկերները հետաքրքրական էր ա-  
ռանձնապէս այն տեսարանն, ուր Իրանի ազ-  
գային հերոս Ֆէրիդունը իր հակառակորդ  
արաբ Զոհակին (Աթ-դահակ) մահուան է դա-  
տապարտում :

Այս ցուցակից երեւում է, որ Ծահնամէն  
առաջին անգամ Թուրքերէնի է թարգմանուել,  
որ հետեւանք էր ժամանակի քաղաքական  
հանգամանքներին :

Տպագրական գործն էլ ցոյց էր տրուած  
այնտեղ : Ծահնամէի առաջին թարգմանու-  
թիւնը տպուել է Անգլիերէն՝ Կալկաթայում,  
նախ 1811ին եւ ապա 1829ին :

Այսչափ՝ Ծահնամէի բաժինը : Նուազ հե-  
տաքրքրական չէին Իրանի վերաբերեալ միւս  
բաժինները : Այնտեղ մի պարսկերէն գրչագիր  
կար՝ Գանձակեցի Նիզամի կոչուած բանաս-  
անդի (Վախճ. 1203) որ վէպ էր «Իսկանդեր-  
Նամէ» վերնագրով : Այս գիւցազներգութիւնը  
չարունակութիւն էր Ծահնամէին, որտեղ  
Ֆիրդուսին նկարագրել է Աղ. Մակեդոնա-  
ցուն, որին ինչպէս յայտնի է, Պարսիկ բա-  
նաստեղծներն իբրեւ իրենց արքաների սե-  
րունդ են ընդունում եւ ըստ այնմ էլ Իրանի  
ազգային թագաւոր համարում :

Յուցահանդէսն ունէր իր դրամագիտա-  
կան մասը : Յոյց էին տրուած Սուլթան Մահ-  
մուդ Ղազնեվիի (նա, որ Ֆիրդուսիին յանձ-  
նարարել էր Ծահնամէն ոտանաւորի վերա-  
ծել) դրամները, զրանց քով էլ գրուած էին  
Բաղդադի ամիրապետ Կազըր Բիլլահի կտրած  
դրամներն, որի քով որ Ֆիրդուսին ապաստան  
էր գտել Մահմուդի հետ իր յարաբերութիւն-

ները խզելուց յետոյ եւ նրա երկիւղից փախուստ տարով: Կային նաեւ ուրիշ դրամներ Սասանեանների շրջանից:

Շատ ուշագրաւ էին՝ Գաղղիայի եւ Պարսկաստանի մէջ տեղի ունեցած պատմական յարաբերութիւնների վերաբերեալ վաւերագրիչները, որոնց մէջ մանաւանդ՝ Իրանի վրայ իշխող Թուրանի՝ այն է թաթարական Սաների Գաղղիոյ թագաւորներին դրած նամակների բնագիր, մէկը՝ Արդունի, որ գրուած էր 1289ին եւ միւսը Օլջայթուի (Oeldjaitou) 1305, որոնք յատուկ թաթար պատգամաւորներ Պարսիս են բերել: Հետաքրքրական էր նաեւ մի վիմագիր պատկեր, որ ցոյց էր տալիս թէ ի՞նչ մեծ շուքով Լուզովիկոս ԺԳ. 1715ին ընդունել է պարսից շահի դեսպանին:

Հարուստ էր նաեւ Իրանագիտութեան վերաբերեալ բաժինը, որից երեւում է, որ Եւրոպան շատ ուշ եւ շատ դանդաղ է սկսել ծանօթանալ Իրանական աշխարհին: Այս ծանօթութիւնը սկսում է Vincent de Beauvaisի Miroir historialից, տպ. 1469ին: Niebuhrի Արաբիայում եւ Հարաւային Պարսկաստանում կատարած ուղեւորութեան նկարագրութիւնը՝ Փրանսերէն թարգմանուելով տպուել է 1776—1780ին: Այս դրական աշխատութիւններից ղեկավարուելով համբաւաւոր արեւելագէտ Silvestre de Sacy մեկնարանել է Նաքշի-Ռուստամի արձանագրութիւնները:

Պարսկերէն լեզուի առաջին քերականութիւնը, կամ առաջիններից մին, տպուել է Փրանսերէն, Հոլլանդայում, Louis de Dieuի հեղինակութեամբ (ծն. 1590), որ դասախոսում էր Լէյդէնի համալսարանում: Մի ուրիշ քերականութիւն, լատիներէն գրուած, տպուել է 1639ին: Այս երկու քերականութիւններն են եղել պարսկերէն լեզուի ուսման առաջին ձեռնարկներն Եւրոպայում:

Իրանագիտութեան բուն ուսմանը եղել է հոչակաւոր գաղղիացի արեւելագէտը Անքետիլ-Դիւպերոն (Anquetil-Duperron, 1731—1805), որ առաջին անգամ ուսումնասիրել է Զրադաշտի Աւեստան, շնորհիւ այն բնագիրների եւ սանսկրիտերէնից կատարուած պարսկական թարգմանութիւնների, որ նա գտել էր Հնդկաստանում: Յոյց էին արուած այնտեղ Ձէնդ-Աւեստայի գրչագիր օրինակներ եւ թարգմանութիւններ:

Աւելորդ էմ համարում կանոց առնել այլեւայլ Եւրոպական լեզուներով երեւցած բազմաթիւ ուղեգրութիւնների վրայ դէպ ի Պարս-

կաստան, տպուած 1487ից սկսած, որոնք Յուցահանդէսում ընդարձակ տեղ էին գրաւել:

Յուցահանդէսի պատերը ծածկուած էին Ֆիրդուսիի հայրենիքը յիշեցնող աշխարհագրական քարտէսներով: Այս կէտում առաջնութիւնը Փրանսացիներին չէ պատկանել: արանց մասնակցութիւնը սկսում է միայն Փէղարից, յայտնի ուղեւոր Շարդէնից: Ուստի Библиотеque Nationaleը ստիպուել է դիմել այս բաժնում Պորտուգալցի եւ Հոլլանդացի նաւագնացների, եւ Իտալացի դիւանագետների եւ ուսուցարների գործակալների աշխատութիւններին:

Հետաքրքրական էր մի Պորտուգալցի նաւագնացի կազմած քարտէսը, որ Եւրոպան էր ներկայացնում 1515ին եւ որի արեւելեան սահմանները նա տարել էր մինչեւ Կասպից ծովի եզրերը, Ապշերոնեան թերակղզու ծայրը, եւ այդտեղ դրել էր մի մեծ կրակատուն<sup>1</sup>, որի վրայ բոցն այնպէս էր փայլում, որ ինձ յիշեցրեց այդ տեղի (Բաքուի) նաւթահորերի հրդեհը...: Կասպից ծովի եզրերը ներկայացնող մի ուրիշ քարտէս էլ կար, որ մի Հոլլանդացի է գծել Carel van Werden անունով, 1721ին, երբ յատկապէս, Մեծն Պետրոս ուսական կայսեր յանձնարարութեամբ շրջել է այդ տեղերը: Մեծն Պետրոս այս քարտէսը նուիրել է Ազգային Մատենադարանին, ի յիտատակ իր Պարսիս այցելութեան:

Բոլոր այս հնօրեայ քարտէսների մէջ երեւակայութիւնն (fantaisie) էլ իր դերն ունէր: Եւրոպան այն ժամանակ միայն ճիշդ գաղափար է կազմել Իրանական աշխարհի մասին երբ լիովին պատրաստուած արեւելագէտներ գիտական նպատակով ուղեւորել եւ ուսումնասիրել են երկիրը:

Պարսիսի այս Ֆիրդուսիական Յուցահանդէսը մի ուրիշ հետաքրքրական կողմն ունէր մեզ, հայերիս համար: Պահարաններից մէկում պատուաւոր տեղ էր գրաւել մի հին հայ հեղինակի երկասիրութիւնը: Hayton l'Armenien տիտղոսի տակ ցոյց էր արուած Կորիկոսի իշխան՝ Հեթում պատմիչի հեղինակութիւնը, լատիներէն գրուած 1350ին, որի գաղղիերէնը տպուած Պարսիսում 1517ին, հետեւեալ խորագիրն էր կրում. «Les fleurs des

<sup>1</sup> Քարտէսագրի այս տեղեկութիւնը շատ ճիշդ է այնտեղ, ուր այժմ Բաքուի համբաւաւոր նաւթային հանքերն են գտնուում, կրակատուններ եղել են շատ վաղուց, շնորհիւ այն բնական ստորերկրեայ գազի, որ հիմայ էլ արտահանում է եւ օդի մէջ բոցավառում:

Histoires de la Terre d'Orient, compilées par frère Hayton, seigneur du Kork, cousin Germain du roy d'Arménie»:

Շնորհիւ այն հանդամանքի, որ հազարաւոր եւրոպացիներ այցելել են այս Յուցահանդէսը, պարսիկ հանձարեղ բանաստեղծի ծանօթութիւնն եւ համբաւը տարածուել եւ ընդհանրացել է նաեւ ժողովրդական խաւերում:

ՍԱՐՈՒՆԱՆ



ՊՐՈՑ. ՅԱԿՈՒ ՄԱՆԱՆԻՆԱՆ, Ֆեոդալիզմի հայաստանում: Երևան 1935, 80, էջ 338: Գիճճ՝ 12 ո.: [Հրատ. Մեխոնեան Ֆոնդի, Թ. 19:]

Հայաստանի տնտեսական կեանքի կազմակերպութեան նուիրում է այս աշխատութիւնը: Պրոֆ. Մանանդեան ծանօթ է արդէն իւր պատմական, բանասիրական եւ հայ տնտեսական-քաղաքական պատմութիւնը շօշափող երկերով: Այս աշխատութիւնը հայերէն նորագոյն խմբագրութիւնն է հեղինակին «Заметки о феоде и феодалном войске Парфии и Аршакидской Армении», изд. Закуфилиала Академии Наук, Тифлиси 1932) ուսերէն գործին:

Հայոց տնտեսական եւ քաղաքական կեանքի զարգացումը եւ անկումը ուսումնասիրելու համար անհրաժեշտ է անոր տնտեսական դրութիւնը լուսարանել: Ինչպէս ուրիշ ազգերու, նոյնպէս հայ աշխարհին մէջ իւր գործօն դերը կատարած է աւատական դրութիւնը (féodalité): Հեղինակը առաջին ուշադրութիւնը կը դարձնէ պարզել հին հայ նախարարական շրջանը, իբր աւատական դրութիւն իր էական եւ առանձնայատուկ գծերով: Նիւթի ծանօթութեան վկայ են ազգիւրները, գործնք գործածած է (11—24) աշխատութեանս մէջ: Թէ ի՞նչ է աւատականութիւնը ընդհանրապէս կը բացատրուին կազմակերպութեան էական եւ կարեւոր յատկանիշներով. որոնց մէջէն առաջին տեղը կը զրաւէ՝ մեծ կալուածատիրութիւնը եւ ազնուականութեան գերակշռող դերը: Այս մեծ հողատիրութեան հետ կապուած ըլլալով կառավարչական, դատական եւ նաեւ ուրիշ իրաւունքներ եւ արտօնութիւններ՝ հողատէրն իշխան եւ տէր իր սահմաններուն՝ իբր փոքրիկ

միահեծան մը կ'իշխէր հոն: Այս սահմաններն Փրանսա կ'անուանէին seigneurie, Անգղիա manor, Գերմանիա Grundherrschaft:

Իբր երկրորդ էական կէտ աւատական դրութեան՝ կը շեշտուի այն աստիճանական միութիւնը, որով մարդիկ իրարու հետ կը կապուէին: Սոյն կապը, կարելի է անուանել «վասսալական» (vassalle), այսինքն «ճորտական» միութիւն: Փոքրիկ ճորտերը՝ յատուկ պայմանագրերով բարձրագոյն ճորտերու հովանաւորութեան տակ, ունէին իրենց գիւնտերական եւ ուրիշ ծառայական պարտականութիւնները, այսպէս աստիճանաբար՝ ամենաբարձրագոյն պետերն ու իշխաններն իրենց կարգին՝ ունէին որոշ պարտականութիւններ արքայի հանդէպ: Վերը դրուած երկու կէտերը՝ աւատական դրութեան էութիւնը կը պարզեն, դրութիւն մը, որուն վրայ հիմնուած էր ամբողջ Միջնադարեան Եւրոպան:

Յետագայ շորրորդ հատուածը (32—90) նիւթ ունի հայ նախարարութիւնը: Հիմնուելով մատենագրական աղբիւրներու տուեալներուն վրայ, հեղինակը կը ներկայացնէ նախարարական դասը եւ հայ նախարարութեան էութիւնը. ուսկից հետեւեալ եզրակացութեան կը հասնի. Ազնուականներու բարձր դասը՝ համապատասխան Միջնադարեան Եւրոպայի «seigneur»ներու, հայ հնագոյն աղբիւրներու մէջ կը կոչուին «նախարար», «նախարարագլուխ», «ազգ», «սոսմք կամ տունք նախարարաց»: Ինչպէս Եւրոպայի մէջ աւատական դրութեան բարձրագոյն ճորտերն էին «seigneur»ները, նոյնպէս նախարարները Հայաստանի մէջ:

Առաջին անգամ անգղիացի Ջիբբըն նշանաւոր գիտնականն էր ԺԸ. դարուն, որ կարծիքը յայտնեց թէ՛ աւատականութիւնը արդէն Արշակունիներու ժամանակ գոյութիւն ունեցած ըլլայ<sup>1</sup>: Առաջին բնական խուզարկուն, հայ աւատականութեան ծագման, եղաւ Նիկ. Ազոնց<sup>2</sup>: Իսկ Մանանդեան համառօտիւ անցնելով ծագման մասին յայտնուած կարծիքներէն, կը ծանրանայ մասնաւորապէս նախարարական կազմակերպութեան շուրջ:

<sup>1</sup> E. Gibbon, The history of the decline and fall of the Roman empire, ed. by Bury, London 1900, I, p. 203—204. Տես նաեւ A. Harnack, Die Mission und Ausbreitung des Christentums in den ersten drei Jahrhunderten. 2. Aufl. Leipzig 1906, II. Band, p. 170: „Als nun Armenien — übrigens ein Feudalstaat mit einem mächtigen Adel und einer reichen Priesterschaft.“  
<sup>2</sup> „Армения в эпоху Юстиниана“ (СПБ. 1908).